

Շուշանիկ ՏԵՐ-ԱԴԱՄՅԱՆ

Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ

PRÄTERITUM ԵՎ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ, ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հոդվածը նվիրված է գերմաներենում Präteritum ժամանակային ձևի քննությանը՝ ներկայացնելով այն հայերենի անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակային ձևերի գուգադրմամբ: Հիշյալ ձևերի գուգադրման արդյունքում բացահայտվում են մի շարք իմաստային և գործառական ընդհանրություններ ու տարբերություններ, որոնք բնորոշ են տվյալ ձևերին անցյալի ոլորտում: Տեղակայվելով բացարձակ ժամանակային պլանում՝ Präteritum և անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակային ձևերն ունեն տարբեր կերպային արժեքներ: Երկու լեզուներում համապատասխան ձևերը դրսևորում են հոմանիշային հարաբերություններ այլ ժամանակաձևերի հետ, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում մի շարք թարգմանական խնդիրների պարզաբանումը:

Բանալի բառեր. ժամանակային ձև, բացարձակ ժամանակային պլան, առաջնային իմաստ, երկրորդային իմաստ, խոսքի պահ, գործողության պահ, իմաստա-գործառական առանձնահատկություններ, անցյալի ոլորտ, ապառնիչ ոլորտ

Տեղակայվելով բացարձակ ժամանակային պլանում՝ Präteritum-ը նշում է անցյալի վիճակի առավել ընդհանուր իմաստ: Այս դեպքում գործողությունը դիտվում է որպես զուտ անցյալի իրողություն՝ խզելով կապը ներկայի հետ և վերաբերելով բացառապես անցյալի ոլորտին /Գաբրիելյան, 2006:58/: Որպես բացարձակ ժամանակային ձև՝ Präteritum-ի համար որպես հաշվարկման կենտրոն ընդունելի է խոսքի պահը: Ընդ որում, այս դեպքում առկա է խոսքի պահի և գործողության պահի լիակատար անհամապատասխանություն: Ավելին, այն նշում է որոշակի հեռավորություն խոսքի պահի և գործողության պահի միջև: Գերմաներենում Präteritum ժամանակային ձևը հանդես է գալիս որպես հայերենի անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակաձևերի համարժեք: Ի տարբերություն, սակայն, հայերեն համարժեքների՝ այն դրսևորում է մի շարք տիպաբանական յուրահատկություններ: Եթե հայերենում անկատարի և կատարյալի համար առկա են հարաբերականորեն առավել կոնկրետ արտահայտման կադապարներ, ապա գերմաներենում տվյալ քերականական երևույթն առավել աղոտ է ուրվագծված: Այստեղ առկա են մի շարք անհամապատասխանություններ տվյալ ժամանակային ձևերի միջև թե՛ արտահայտության, թե՛ բովանդակության պլանում: Առաջնային իմաստով այս ժամանակային ձևը գերմաներենում նշում է անմիջականորեն անցյալում կատարված կամ կատարվող գործողություն: Ընդ որում, Präteritum ժամանակային ձևով կազմությունները գերմաներենում կարող են դրսևորել երկիմաստություն, ինչպես, օրինակ՝

Als ich ankam, kochte sie Kaffee.

Այս նախադասությունը հայերեն թարգմանելիս կարող է ունենալ երկու համարժեք տարբերակներ՝ դրսևորելով տարբեր կերպային արժեքներ.

(ա) Երբ ես ներս մտա, նա սուրճ էր եփում:

(ա) Երբ ես ներս մտա, նա սուրճ եփեց:

Հայերեն առաջին տարբերակում արտահայտվում է գործողություն, որը մեկ այլ գործողության կատարվելու պահին արդեն ընթացքի մեջ էր: Ընթացականությունն այս դեպքում արտահայտվում է միևնույն նախադասության մեջ անցյալ կատարյալ և անցյալ անկատար բայաձևերի համադրմամբ: Մինչդեռ երկրորդ նախադասության երկու մասերում էլ նշվում է կատարված գործողության գաղափար: Երկրորդ գործողությունն սկսվում և ավարտվում է առաջին գործողության հետևանքով (այս դեպքում գործում է պատճառահետևանքային կապը): Հայերեն տարբերակներում գործ ունենք մի դեպքում՝ անկատար, մյուս դեպքում՝ կատարյալ կերպի հետ, ինչը, սակայն, գերմաներեն համարժեքներում հստակ չէ: Դա հնարավոր է որոշակիացնել բացառապես բառային ցուցիչներով.

Als ich ankam, kochte sie gerade Kaffee.

Երբ ես ներս մտա, նա հենց այդ ժամանակ սուրճ էր եփում:

Als ich ankam, kochte sie sofort Kaffee.

Երբ ես ներս մտա, նա անմիջապես սուրճ եփեց:

Այսպիսով, բերված օրինակներից պարզ է դառնում, որ անցյալի այս ձևերի համար գերմաներենում անկատար - կատարյալ հակադրությունն առարկայանում է միայն բառային առկայացուցիչների միջոցով.

Heute morgen ging vor mir ein englischer Offizier die Straße hinab. Ich fasste augenblicklich den Entschluss, ihn anzusprechen /Brinkmann, 1962, S. 335/.

Այսօր առավոտյան իմ առջևից մի անգլիացի սպա էր փողոցով իջնում: Ես ակնթարթորեն որոշեցի նրա հետ խոսել:

Առաջին նախադասության մեջ Präteritum բայաձևը նշում է ընթացականություն, երկրորդ նախադասության մեջ՝ ակնթարթային գործողություն: Präteritum ժամանակային ձևով արտահայտվում է ամբողջական, բայիմաստի հետ բովանդակությամբ միասնական գործողություն, եղելություն: Գործողության համար որևէ իմաստային հստակեցման անհրաժեշտության դեպքում ներմուծվում են լրացուցիչ միջոցներ՝ բայական լրացումներ, ինչպես վերը նշված օրինակում, որտեղ երկրորդ նախադասության բայի արտահայտած ակնթարթային (կատարյալ) իմաստն առարկայանում է *augenblicklich/ակնթարթորեն* բառային առկայացուցչի միջոցով: Գերմաներենում Präteritum ժամանակային ձևի արտահայտած իմաստային դրսևորումները (կերպիմաստ, գործողության բնույթի իմաստ) լիովին կախվածության մեջ են համատեքստից և բացահայտվում են բացառապես լեզվական միջոցների առկայության պայմաններում, ինչն էլ հնարավորություն է տալիս տարբերակել գործողության բնույթը կատարյալ կամ անկատար կերպային առնչությունների տեսակետից: Մինչդեռ հայերեն համարժեքները հանդես են գալիս կերպի նկատմամբ առավել կոնկրետ հարաբերությամբ:

Ինչպես արդեն վերը նշվեց, երկու լեզուներում այս ձևերը հանդես են գալիս գուտ անցյալի իմաստով, ինչն էլ հնարավորություն է տալիս սահմանել տվյալ ժամանակային ձևի՝ որպես անցյալի գործողության հաղորդման հիմնական ժամանակաձևի կիրառության ոլորտը՝

1939 überfiel Hitler Polen /Rödel, 2007, S. 78/.

1939 թ. Հիտլերը հարձակվեց Լեհաստանի վրա:

Präteritum և անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակային ձևերը հանդես են գալիս որպես պատմական փաստերի, անցյալի գործողության, եղելության արձանագրման հիմնական ժամանակային ձևեր: Հիշյալ ձևերով արտահայտվում է անցյալի գործողության վերարտադրում առանց որևէ այլ ժամանակակետի հարաբերության:

Վերացարկվելով Präteritum և անցյալ կատարյալ, անցյալ անկատար ձևերի՝ որպես անցյալի գործողության արտահայտման ժամանակային ձևերի ընկալումից և դիտելով դրանք որպես հիշողության, որպես անցյալի վերարտադրման հիմնական ժամանակային ձևեր՝ հնարավոր է սահմանել դրանց կիրառության հնարավորությունները: Այս տեսակետից ուշագրավ են Präteritum-ի և անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակային ձևերի **պատմողական, կետային, պարբերական, բնութագրական, ընդհանրական և ասպառնի** երկրորդային դրսևորումները, որոնք հնարավորություն են տալիս ընդարձակելու տվյալ ժամանակաձևերի կիրառության սահմանները:

Präteritum և անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակային ձևերի հարացուցային նշանակության հիմնական բնույթին համապատասխան՝ այս ձևերը հանդես են գալիս **պատմողական** գործառույթով, որը չի նշում հիշյալ ձևերի առաջնային իմաստի մթագնում:

Vorgestern kam der Medikus hier aus der Stadt hinaus zum Amtmann und fand mich auf der Erde unter Lottens Kindern, wie einige auf mir herumkrabbelten, neckten mich und wie ich sie kitzelte und ein großes Geschrei mit ihnen erregte /Goethe, 1986, S. 30/.

Նախանցյալ օրը քաղաքից այստեղ՝ կառավարիչի մոտ, մի բժիշկ եկավ, որ տեսավ ինձ հատակին Լոտտեի փոքրիկների հետ խաղալիս. տեսավ, թե ինչպես նրանցից մի քանիսը մագլցում էին վրաս, քաշքշում էին ինձ, ես էլ խուտուտ էի տալիս նրանց ու նրանց հետ անասելի աղմուկ բարձրացնում /Գ.յոթե, 1981, S. 49/:

Վերոբերյալ օրինակում հիշյալ ժամանակաձևերն այսպիսի իրացմամբ հանդես են գալիս որպես պատմվածքի հիմնական ժամանակային ձևեր՝ հնարավորություն ընձեռելով ընթերցողին տեղափոխվել անցյալի ոլորտ և ներկայացնել անցյալի գործողությունների հաջորդական շղթա: Präteritum և անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակային ձևերը նշում են գործողության ընդգրկում սահմաններ, որի ներսում կա կապակցվածություն: Այն ձեռք է բերվում այն բանի շնորհիվ, որ այս ժամանակային ձևերով հաղորդվող գործընթացները փակված չեն և միմյանց նկատմամբ մեկուսացած չեն հանդես գալիս, այլ բաց են և այդպիսով ներկայացնում են հաջորդական գործողությունների գաղափար:

Եթե Präteritum և անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակային ձևերը նախորդ իմաստային դրսևորումներում չեն ենթադրում ժամանակային սահմանների հստակեցում, ապա սույն ձևերը **կենտային** իրացմամբ պարտադիր կերպով նշում են որոշակի ժամանակակետի կամ ժամանակահատվածի կատարյալ համընկնում: Այսպիսի իմաստային դրսևորմամբ հիշյալ ձևերը խոսքում հանդես են գալիս ժամանակի պարագա կամ պարագայական խմբերի համադրությամբ՝ նշելով գործողության, եղելության համար որոշակի ժամանակային սահմաններ.

Um Mitternacht war das Fest zu Ende /Berens-T., 1949, S. 15/.

Կեսգիշերին տոնն ավարտվեց:

Անցյալի այս ձևերը նշում են **պարբերաբար** կրկնվող գործողության գաղափար անցյալի ոլորտում: Պարբերականությունն այս դեպքում արտահայտվում է համապատասխան պարագա կամ պարագայական խմբերի միջոցով, ինչպես՝

Überhaupt genoss er, wie immer, wenn er hier auf dem Hofe war /Berens-T., 1949, S. 67/.

Ընդհանրապես նա վայելում էր, ինչպես միշտ, երբ ազարակում էր լինում:

Präteritum-ը, ինչպես նաև հայերենի համապատասխան ժամանակային ձևերը կարող են հանդես գալ անձ, առարկա **բնութագրող** գործառույթով անցյալի վերաբերությամբ: Այս դեպքում, սակայն, բառային ցուցիչների առկայություն չի պահանջվում: Սույն գործառույթն իրացվում է բացառապես բայիմաստի և համատեքստի միջոցով: Դրանք հիմնականում մարդու արտաքինի, հույզերի, զգացմունքների նկարագրությանը վերաբերող բայեր են.

Er war nicht sehr groß, hatte aber den Gang und die Kopfhaltung von großgewachsenen Menschen, er trug einen modernen bequemen Wintermantel und war im übrigen anständig, aber unsorgfältig gekleidet, glatt rasiert und mit ganz kurzem Kopfsaar, das ein wenig flimmerte /Hesse, 1985, S. 9/.

Շատ բարձրահասակ չէր, սակայն բարձրահասակ մարդու քայլվածք ու պահվածք ուներ, կրում էր ժամանակակից հարմարավետ ձմեռային վերարկու և, առհասարակ հագնված էր վայելուչ, բայց ոչ խնամքով, մաքուր սափրված էր և գլխին ուներ կարճ մազեր, որոնք փայլում էին ճերմակով /Հեսսե, 2003, S. 4/:

Präteritum ժամանակային ձևերը կարող են նաև հաղորդել **տևականության** իմաստ անցյալի վերաբերությամբ: Գերմաներենը չի նշում արտահայտության պլանում տարբերակված միավորներ տևական, ոչ տևական գործողությունների, եղելությունների համար: Այսպիսի իրացմամբ անցյալի ձևերը արտահայտում են որոշակի ժամանակահատված ընդգրկող գործողության իմաստ առանց ժամանակային սահմանափակման և վերջի գաղափարի: Հիշյալ ձևերի նման իրացումը խոսքում կախված է հիմնականում համատեքստից և բառային ցուցիչներից.

Wohl zehn Minuten las ich in einer Zeitung /Hesse, 1985, S. 48/.

Միտ տաս րոպե ես թերթ էի կարդում /Հեսսե, 2003, S. 42/:

Այսպիսի բազմազան կիրառության հնարավորությունները բացահայտում են անցյալի ձևերի իմաստային հարուստ ներուժը, որը թույլ է տալիս տվյալ

ձևերին ծավալվել անցյալի ոլորտում դեպի ներկայի, ապա նաև՝ դեպի ապառնիի ժամանակային ոլորտներ:

Ներկայի հետ հոմանիշությունը դրսևորվում է Präteritum-ի **ընդհանրական** իմաստի իրացման դեպքում, որը կիրառելի է անցյալի վերաբերությամբ համընդհանուր մտքերի, գաղափարների արտահայտման նպատակով: Տվյալ ձևի իմաստային իրացման համար այս դեպքում պարտադիր պայման է դառնում համատեքստը, որը դառնում է ժամանակային իմաստի դրսևորման հիմնական պայմանավորող գործոնը: Եթե ասենք՝

Zweimal zwei war vier.

Երկու անգամ երկու չորս էր:

դժվար թե տվյալ նախադասությունը համատեքստից դուրս ճիշտ ընկալվի, բայց եթե ասենք՝

Hans lernte viele interessante Dinge in der Schule: zweimal zwei war vier, Malachit war ein Mineral /Tieroff, 1992, S. 118/.

Հանսը դպրոցում շատ հետաքրքիր բաներ էր սովորում. երկու անգամ երկու չորս էր, մալախիտը հանքանյութ էր:

ապա համապատասխան համատեքստի առկայության պարագայում այն դառնում է միանգամայն ընկալելի:

Կարող են նաև արտահայտել համընդհանուր դատողություններ, որոնք ինքնին հասկանալի են և չեն պահանջում որևէ համատեքստ.

O, wie wahr fühlten die Menschen, die so widersprechende Wirkungen fremden Mächten zuschrieben! /Goethe, 1986, S. 99/

Օ՛, որքան իրավացի էին մարդիկ, որ ներքին հակասություններն օտարոտի ուժերի էին վերագրում /Գ.յոթե, 1981, S.190/:

Ինչպես տեսանք, գերմաներենում անցյալի այս ձևերը, իրացվելով ընդհանրական գործառույթով, համարժեք դրսևորումներ են գտնում նաև հայերենում՝ արտահայտվելով հիմնականում անցյալ անկատար ժամանակային ձևերով:

Եթե Präteritum և անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակային ձևերի պատմողական, պարբերական, բնութագրական, տևական, կետային գործառույթները բխում են դրանց հիմնական իմաստից, համարվում են սույն ձևերի համար անցյալի իմաստի մասնակի դրսևորումներ, ապա նույնը չի կարելի ասել նաև այս ձևերի ընդհանրական և ապառնի գործառույթների մասին, որոնց դեպքում չեզոքացվում է բուն անցյալի հարացուցային նշանակությունը, և անցյալի այս ձևերը փոխանցվում են ներկայի և ապառնիի ժամանակային ոլորտներ:

Ապառնիի վերաբերությամբ այս ձևերն առավել հստակորեն ծավալվում են ուղղակի խոսքում՝ չնշելով, սակայն, բացարձակ սահմանափակում ուղղակի խոսքի ոլորտով: Այսպիսի իրացմամբ այս ձևերն առավել հաճախ հանդիպում են երկրորդական նախադասություններում, ինչպես, օրինակ՝

Hans wusste, dass die Ferien bald zu Ende waren /Thieroff, 1992, S. 118/.

Հանսը գիտեր, որ շուտով արձակուրդներն ավարտվում էին:

Այսպիսի իրացմամբ Präteritum և անցյալ կատարյալ, անցյալ անկատար ժամանակային ձևերը չեն նշում ապառնի գործողություն անցյալի հարաբերությամբ, այլ նշում են անցյալ ժամանակակետում՝ մեկ այլ անցյալ ժամանակակետի նկատմամբ կատարվելիք գործողություն: Ապառնի իմաստի դրսևորումը հիշյալ ձևերով հնարավոր է այն դեպքում, երբ առկա է անցյալի ոլորտում տեղակայված գործողության, ենթադրության սպասողական վիճակ: Մույն ձևերի այսպիսի գործառույթի իրացումը խոսքում հնարավոր է միայն ժամանակի մակբայների համադրությամբ: Այս պարագայում, անշուշտ, կարևորվում է նաև համապատասխան համատեքստի առկայությունը, ինչպես՝

Morgen kamen ihre Eltern zu Besuch /Thieroff, 1992, S. 118/.

Վաղը նրա ծնողներն այցելության էին գալիս:

Քերականության տեսակետից, սակայն, այս նախադասությունը չի կարելի միանշանակ մեկնաբանել, այն կարելի է ճիշտ համարել միայն որոշակի համատեքստի պայմաններում.

Am 6. April wurde Anna früh wach. Sie hatte viel zu tun, denn morgen kamen ihre Eltern zu Besuch /Thieroff, 1992, S. 118/.

Ապրիլի վեցին Աննան վաղ արթնացավ: Նա շատ անելու բան ուներ, քանի որ վաղը նրա ծնողներն այցելության էին գալիս:

Ինչպես ցույց տվեց գերմաներենում համապատասխան օրինակների վերլուծությունը, անցյալի ձևերի ապառնի իրացումները խոսքում պահանջում են որոշակի պայմաններ. այն է համապատասխան համատեքստ և բառային միջոցներ, որոնց շնորհիվ է միայն հնարավոր տվյալ իմաստի դրսևորումը: Մինչդեռ հայերենում անցյալ կատարյալ ձևը, հանդես գալով ապառնի իմաստով, հաղորդում է միանգամայն միանշանակ իմաստներ, որոնք հիմնականում բնորոշ են ժողովրդախոսակցական ոճին: Դրանք մեծ մասամբ հանդես են գալիս պայմանի երկրորդական նախադասություններում, ինչպես, օրինակ՝ **«Եթե տես, կասեմ», «Բայց որ գնաց, այլևս փրկություն չկա»:**

Անդրադարձ կատարելով հայերենում անցյալ կատարյալ և անցյալ անկատար ձևերին՝ հարկ է նշել, որ դրանց միջև առկա է ոչ այնքան ժամանակային, որքան կերպային տարբերություն: Այս ձևերի համար հիմնականը կատարյալության, ավարտվածության կամ անկատար, անավարտ հատկանիշի ընդգծումն է: Հայերենում այս երկու ձևերի միջև կերպային տարբերությունն արտահայտվում է հարացուցային մակարդակում՝ որպես այդ ձևերի կարգային նշանակություն, ինչպես և դրան համապատասխանող խոսքային միջավայրում: Հայերենում անցյալ կատարյալ և անցյալ անկատար ժամանակային ձևերի տարբերակման հարցում առաջ են գալիս նաև դերբայների հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք կարևոր դեր են խաղում հայերենում բայ - խոսքի մասի բնորոշման հարցում: Այս դեպքում երկու ձևերը հակադրվում են միմյանց՝ անցյալ կատարյալն իր դերբայական պարզ բայահիմքով, անցյալ անկատարն՝ իր դերբայական հիմքով և դիմային վերջավորությամբ:

Այսպիսով, զուգադրական քննության արդյունքները թույլ են տալիս գերմաներենի Präteritum-ի և հայերենի անցյալ կատարյալի, անցյալ

անկատարի համար սահմանել ընդհանուր հատկանիշներ, որոնք առավել հստակորեն արտահայտվում են խոսքային մակարդակում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. Հայոց լեզվի տեսություն, Երևան, Միտք, 1965:
2. Գաբրիելյան Յու. Գերմաներեն լեզվի տիպարանություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2006:
3. Brinkmann H. Die Deutsche Sprache. Gestalt und Leistung (Sprache und Gemeinschaft.), Bd. 1: Düsseldorf: Pädagogischer Verlag Schwann, 1962.
4. Gabrieljan J. Deutsche Grammatik in Theorie und Praxis. Jerewan: Verlag der Universität Jerewan, 2008.
5. Thieroff R. Das finite Verb im Deutschen. Modus-Tempus-Distanz. Tübingen: Narr, 1992.
6. Duden, Weinrich H. Textgrammatik der deutschen Sprache. Mannheim-Leipzig-Wien-Zürich: Dudenverlag, 1993.
7. Rödel M. Doppelte Perfektbildungen und die Organisation von Tempus im Deutschen. Tübingen: Stauffenburg, 2007.

Յ. ТЕР-АДАМЯН – Типологические особенности Präteritum-a и совершенного прошедшего, несовершенного прошедшего. – Präteritum и прошедший совершенный, прошедший несовершенный являются эквивалентными формами в немецком и армянском языках. В армянском языке основной функцией данных форм является выражение совершенности-несовершенности в плане прошедшего. В немецком языке Präteritum не обладает такой функцией. В результате грамматической нейтрализации данные формы могут переместиться из сферы прошедшего в сферу настоящего или будущего времени, при этом отступая в той или иной степени от их основного значения.

Ключевые слова: временная форма, абсолютный временной план, основное значение, вторичное значение, момент речи, момент действия, семантико-функциональные особенности, сфера прошедшего, сфера будущего

ՅԻ. TER-ADAMYAN – Typological Peculiarities of Präteritum and Past Perfective, Past Imperfective. – Präteritum and Past Perfective, Past Imperfective are equivalent tense forms in Armenian as well as in German which denote past action. The main function of these forms in Armenian is to denote completed and non-completed meanings while in German they do not have such function. In the process of grammatical neutralization these forms gain different temporal meanings which alienate the general meaning of the past.

Key words: tense form, absolute tense plane, general meaning, secondary meaning, moment of speaking, time of action, semantical-functional peculiarities, area of the past, area of the future